ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Արսեն Մարտիրոսյան
ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Քրեական գործով վարույթի կասեցման ինստիտուտը նախկին քրեական դատավարության օրենսգրքի համեմատությամբ որոշ փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես՝ ընդլայնվել են կասեցման հիմքերը, ուժեղացվել են դատավարության այն մասնակիցների իրավունքների ապահովման երաշխիքները, որոնց շահերը կարող են շոշափվել կասեցման մասին որոշում կայացնելով, սահմանվել է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը կասեցման հիմքերի վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ և այլն:

Միաժամանակ, կասեցման ինստիտուտը կազմող առանձին նորմեր (խոսքը հատկապես վերաբերում է կասեցման հիմքերին), իրավակիրառ պրակտիկայում առաջացնում են որոշ խնդիրներ՝ պայմանավորված դրանց կիրառմամբ կամ մեկնաբանմամբ, ուստի կասեցման ինստիտուտը կազմող նորմերի իրավական կարգավորումը պետք է իրականացվի այն հաշվով, որ գործնականում բացառվի դրանց երկակի կամ տարածական մեկնաբանումը, և ապահովվի այդ նորմերի պատշաճ կիրառումը:

Գաղտնիք չէ, որ գործով վարույթի կասեցման հիմքերն այս դատավարական ինստիտուտում զբաղեցնում են կենտրոնական տեղ և մեծապես կանխորոշում են դրա էությունը[1]: Այդ հիմքերի սպառիչ ցանկն ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քր. դատ. օր.) 31-րդ հոդվածում, որտեղ թվարկված է կասեցման վեց հիմք: Այս հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե՝

1) հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ,

2) մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ,

3) մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից,

4) մեղադրյալը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որոնց պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնար է,

5) գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է

[1] Տե՛ս ***Быков В. М.*** Основания приостановления предварительного следствия по УПК РФ //Государство и право, 2004, № 5, С. 106.

քրեական գործով հետագա վարույթը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործով վարույթը դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ կարող է կասեցվել, եթե դատարանը գտնում է, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այս դեպքում դատարանն իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը և դիմելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան:

Քրեական գործով վարույթի կասեցման առաջին հիմքը ***որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելն է***: Մինչև կասեցման այս հիմքի էությունը բացահայտելը ամենից առաջ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրա օրենսդրական ձևակերպմանը: Այս առումով, ինչպես արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ[1], նշված հիմքի օրենսդրական ձևակերպումը՝ «որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը չի պարզվել», հաջող չէ, քանի որ հանրորեն վտանգավոր արարքը կարող է կատարված լինել այնպիսի անձի կողմից, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության (օրինակ՝ անձը արարքը կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, կամ արարքը կատարվել է քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կողմից): Հետևաբար, որպեսզի պարզվի նշված հանգամանքը, նախ պետք է բացահայտվի հանցագործությունը, պարզվի այն կատարած անձը, հաստատվի նրա մեղավորությունը հանցագործության կատարման մեջ, որից հետո միայն քրեական գործով ձեռք բերված ապացույցների բավարար համակցության հիման վրա որոշում կայացվի անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Նշվածով պայմանավորված՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քր. դատ. օր.-ում հստակեցնել կասեցման այդ հիմքի օրենսդրական ձևակերպումը և այն ներկայացնել հետևյալ խմբագրությամբ. ***«չի պարզվել քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի ինքնությունը»***:

ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով գործով վարույթի կասեցման հնարավոր իրավիճակների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տեղ են գտել տարբեր մոտեցումներ: Այսպես, Ա.Մ. Պոպովը և Ա.Ս. Շահինյանը առանձնացնում են երկու իրավիճակ, որոնց դեպքում քրեական գործով վարույթը կարող է կասեցվել քննարկվող հիմքով՝

1) երբ հանցագործության դեպքը ապացուցվել է, սակայն քրեական գործում բացակայում են տեղեկություններ այն կատարած անձի (անձանց) վերաբերյալ,

2) հանցագործության դեպքը նույնպես ապացուցվել է, այն կատարող անձը հայտնի է, սակայն քրեական գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու համար[2]:

Բացի վերը նշված երկու դեպքերից, Ա.Վ. Կոչետովան առանձնացնում է ևս մեկ իրավիճակ, որի պայմաններում նույնպես քրեական գործով վարույթը պետք է

---

[1] Տե՛ս ***Патов Н. А.*** Процессуальные и организационные основы производства по уголовным делам, приостановленным в связи с неустановлением лица, подлежащего привлечению в качестве обвиняемого. Дис. … канд. юрид. наук, М., 1997, С. 55-56.

[2] Տե՛ս ***Попов А. М.*** Проблемы совершенствования оснований и условий приостановления предварительного следствия: Автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 2004. С. 14., ***Шагинян А.С.*** Приостановление предварительного следствия: Автореф. дисс. … к.ю.н. Томск. 2000. С. 20.

կասեցվի որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով. «Քրեական գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով հաստատվել է, որ կասկածյալը կամ մեղադրյալը արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, ինչը հիմք է տալիս կոնկրետ անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու»[1]:

Քրեական գործով վարույթի կասեցման երկրորդ հիմքը առկա է այն դեպքում, երբ ***մեղադրյալը թաքնվում է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ (ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):*** Նշված հիմքի էությունն այն է, որ վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէ, թե որտեղ է գտնվում մեղադրյալը: Քննարկվող հիմքի օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ այն ընդգրկում է քրեական գործով վարույթի կասեցման հարաբերականորեն ինքնուրույն երկու հիմք՝

ա) մեղադրյալը թաքնվում է քննությունից,

բ) մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ:

Գործնականում հաճախ որևէ տարբերություն չի դրվում մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու կամ այլ պատճառներով նրա գտնվելու վայրը պարզված չլինելու հիմքերի միջև: Ավելին՝ հաճախ գործերով վարույթը կասեցնելու մասին որոշումներում վկայակոչվում են թե՛ մեղադրյալների քննությունից թաքնվելու և թե՛ նրանց գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չլինելու մասին: Կամ մեղադրյալի քննությունից թաքնվելու հիմնավորմամբ միջնորդություն է ներկայացվում դատարան նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, սակայն գործով վարույթը կասեցվում է մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չլինելու հիմքով:

Նշված հիմքերի տարանջատումը շատ կարևոր է, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր իրավական բնույթ, առաջացնում է տարբեր քրեաիրավական և քրեադատավարական հետևանքներ: Մասնավորապես՝ մեղադրյալի քննությունից թաքնվելու դեպքում միաժամանակ կասեցվում են նաև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Բացի այդ, մեղադրյալի քննությունից թաքնվելը կարող է հիմք հանդիսանալ նրա նկատմամբ ավելի խիստ խափանման միջոց ընտրելու համար, կամ գրավի ձևով կիրառված խափանման միջոցի դեպքում այն կարող է վերածվել պետության եկամուտի:

Հաշվի առնելով նշված իրավական հետևանքները՝ որոշ հեղինակներ առաջարկում են մեղադրյալի քննությունից կամ դատից թաքնվելը և նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չլինելը օրենքում ամրագրել որպես գործով վարույթի կասեցման երկու ինքնուրույն հիմքեր[2]:

Քննարկվող հիմքերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է բացահայտել նաև «մեղադրյալի քննությունից թաքնվել» և «մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չլինել» հասկացությունների էությունը:

---

[1] Տե՛ս ***Кочетова А. В.*** Актуальные вопросы института приостановления производства по уголовному делу: дис. ... канд. юрид. наук. Челябинск, 2006. С. 73.

[2] Տե՛ս ***Решняк М. Г.*** Деятельность следователя и органа дознания по розыску и установлению местопребывания обвиняемого. Дис. … канд. юрид. наук, М., 1998, С. 42.

Թաքնվել ասելով պետք է հասկանալ քննությունից խուսափելու ակտիվ ձև[1]: Քննությունից թաքնվելու դեպքում մեղադրյալի գործողությունները կրում են գիտակցական, դիտավորյալ բնույթ և հատուկ ուղղված են իրեն հայտնաբերելու գործընթացի դժվարացմանը[2]: Ընդ որում, մեղադրյալի բնակության վայրից բացակայությունը չի կարող միանշանակ հիմք հանդիսանալ հետևություն կատարելու այն մասին, որ վերջինս թաքնվում է քննությունից:

Ինչ վերաբերում է մեղադրյալի գտնվելու վայրն «այլ պատճառով» պարզված չլինելուն, ապա օրենսգիրքը դրա վերաբերյալ որևէ նշում չի պարունակում: Մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառով պարզված չլինել ասելով պետք է հասկանալ այնպիսի օբյեկտիվ հանգամանքներ, որոնք հնարավորություն չեն տալիս քննիչին ստանալու տեղեկություններ մեղադրյալի գտնվելու վայրի վերաբերյալ՝ պայմանով, որ վերջինս չի իրականացրել դիտավորյալ, ակտիվ գործողություններ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար[3]:

Մինչև նշված հիմքերից որևէ մեկով գործով վարույթը կասեցնելն անհրաժեշտ է կատարել ստուգումներ մեղադրյալի բնակության վայրում, հարցում կատարել նրա հարազատներին և հարևաններին, բժշկական հաստատություններ, աշխատանքի վայր, քրեակատարողական հիմնարկներ՝ նրա հնարավոր գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Նշված ստուգողական գործողությունները կատարելուց հետո միայն հնարավոր կլինի հիմնավորված հետևության հանգել մեղադրյալի քննությունից թաքնվելու և այդ հիմքով գործով վարույթը կասեցնելու մասին[4]:

Քրեական գործով վարույթի կասեցման երրորդ հիմքը ***մեղադրյալի կամ այն անձի, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվելն է «ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ»***:

Կասեցման նշված հիմքի հետ կապված՝ դատավարական օրենսդրության մեջ իր լուծումը չի ստացել այն հարցը, թե ինչպես պետք է վարվել, եթե իրավասու մարմինն անձին անձեռնմխելիությունից զրկելու համաձայնություն չի տալիս: Թեև ՀՀ քր. դատ. օր.-ում նշված հարցի վերաբերյալ որևէ կարգավորում նախատեսված չէ, սակայն խնդիրը փորձել է լուծել ՀՀ Վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշմամբ: Այսպես, 2011 թվականի հոկտեմբերի 20-ին կայացրած թիվ ԳԴ5/0022/01/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քննարկվող խնդրին, արձանագրել է. «Չնայած որ ՀՀ Սահմանադրության և ՀՀ դատական օ-

---

[1] Է.Ֆ. Զակիրովան, քննարկելով «խուսափել» և «թաքնվել» հասկացությունների հարաբերակցությունը, նշում է, որ «խուսափել» հասկացությունը ավելի լայն է և ընդգրկում է նաև թաքնվելը: Թաքնվելը անհրաժեշտ է դիտել որպես խուսափելու ակտիվ ձև, որից էլ հետևում է այն հիմնավորումը, որ պետք է տարբերակել պասիվ ձևով խուսափելը, որպիսին է քննիչին չներկայանալը: Տե՛ս ***Закирова Э.Ф.*** Приостановление предварительного следствия в случае, когда подозреваемый или обвиняемый скрылся от следствия, либо место его нахождения не установлено по иным причинам. Автореф. дисс. канд. юрид. наук, Ижевск, 2004, С. 18-19:

[2] Տե՛ս ***Бердичевский Ф. Ю., Якубович Н. А.*** Приостановление предварительного следствия. М.-1974, С. 10.

[3] Տե՛ս ***Солодовник В. В.*** Уголовно-процессуальные проблемы института приостановления предварительного следствия: Дис. ... канд. юрид. наук. СПб., 2011. С. 121.

[4] Տե՛ս ***Быков В. М.*** Основания приостановления предварительного следствия по УПК РФ //Государство и право 2004, № 5, С. 107.

րենսգրքի համապատասխան իրավանորմերը հստակորեն բացառում են դատավորին կալանավորելու կամ քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունն առանց Հանրապետության Նախագահի համաձայնության, այնուամենայնիվ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավական մեխանիզմը, որը վերաբերում է ՀՀ արդարադատության խորհրդի կողմից համապատասխան միջնորդությունը մերժելու կամ Հանրապետության Նախագահի կողմից համաձայնություն չտալու դեպքում արդեն իսկ հարուցված քրեական գործի հետագա ընթացքին, հստակ ու համարժեք չէ»:

Խնդրո առարկա հարցի որոշակի կարգավորում սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, որի համաձայն՝ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթի կասեցումը, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, գործի վարույթի ժամանակավոր ընդմիջումն է: Գործով վարույթը կասեցվում է, եթե գործի քննության ընթացքում առաջ են գալիս նախաքննությունը շարունակել խոչընդոտող այնպիսի հանգամանքներ, որոնք սպառիչ թվարկված են օրենքով, և որոնց վերացման ուղղությամբ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի:

Քրեական գործով վարույթի կասեցման իրավական հետևանքները գնահատելով դատավորի անձեռնմխելիության հիմնարար իրավական արժեքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործով վարույթը կարող է կասեցվել մինչև օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվող անձին պատասխանատվության ենթարկելու համաձայնություն ստանալու հարցի լուծումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի լայն մեկնաբանությունը (այն, որ դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին միջնորդությունը մերժվելուց հետո մինչդատական վարույթն իրականացնող մարմինն իրավասու է կասեցված պահել քրեական գործով վարույթը և առանց որևէ միջոց ձեռնարկելու սպասել մինչև դատավորի լիազորությունները դադարեն) կիմաստազրկեր դատավորի անձեռնմխելիության հիմնարար իրավական արժեքը և դրանով կվտանգեր դատական իշխանության անկախությունը:

Հետևաբար, հիմնվելով սույն որոշման մեջ շարադրված դատական իշխանության անկախության և անձեռնմխելիության հիմնարար սկզբունքները երաշխավորող սահմանադրաիրավական և միջազգային-իրավական նորմերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով նշված իրավանորմերով սահմանված այն իմպերատիվ պահանջը, համաձայն որի՝ դատավորը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել առանց ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկության հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավորին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին իրավասու մարմնի միջնորդության մերժման դեպքում մինչդատական վարույթն ի-

րականացնող մարմինը պարտավոր է կարճել քրեական գործի վարույթը:

Քրեական գործով վարույթի կասեցման չորրորդ հիմքը ***մեղադրյալի ծանր հիվանդությունը կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելն է (ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)***: Ինչպես նախորդ, այնպես էլ այս հիմքի դեպքում օրենսդիրը մեկ կետում նախատեսել է քրեական գործով վարույթի կասեցման երկու ինքնուրույն հիմքեր՝

ա) մեղադրյալը ծանր հիվանդ է,

բ) մեղադրյալը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս:

Ընդ որում, ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում օրենսդիրը օգտագործում է «ծանր հիվանդություն», մեկ այլ՝ 310-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «հոգեկան կամ այլ ծանր հիվանդություն» եզրույթները: Առկա օրենսդրական ձևակերպումների պայմաններում հարց է առաջանում՝ դրանք նույնակա՞ն, թե՞ տարբեր հասկացություններ են:

Մ.Վ. Կարալյովի կարծիքով՝ հոգեկան հիվանդությունը ծանր հիվանդության տարատեսակ է[1]:

Գրականության մեջ տեղ գտած մեկ այլ մոտեցման համաձայն՝ նպատակահարմար է տարանջատել մեղադրյալի ժամանակավոր հոգեկան հիվանդության հիմքը ծանր հիվանդության հիմքից[2]: Կարծում ենք՝ այդպիսի տարանջատում կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ նախ, հոգեկան հիվանդությունները նույնպես կարող են լինել ծանր, բացի այդ, այդպիսի տարանջատումը որևէ իրավական նշանակություն չի կարող ունենալ:

Վ.Մ. Բիկովը և Լ.Դ. Լոմովսկին արդարացիորեն նշում են, որ քրեական գործով վարույթը նշված հիմքով կարող է կասեցվել միայն այն դեպքում, եթե մեղադրյալի հիվանդությունը կրում է ժամանակավոր բնույթ[3]: Նշված տեսակետը պաշտպանում է նաև Լ.Մ Ռեպկինը[4]: Ներկայացված մոտեցումը, կարծում ենք, միանշանակ արդարացված է: Միաժամանակ, հոգեկան հիվանդությունների առանձնահատկությունն այն է, որ առանձին դեպքերում, ինչպես նախապես, այնպես էլ հետագայում, շատ դժվար է ախտորոշել անձի ապաքինվելու մոտավոր ժամանակահատվածը:

Թեև քրեադատավարական օրենքը սահմանում է, որ մեղադրյալի ծանր հիվանդությունը կարող է գործով վարույթի կասեցման հիմք հանդիսանալ, սակայն որևէ կերպ չի բացահայտում այդ հասկացության բովանդակությունը: Կարծում ենք, որ քրեադատավարական օրենքում օգտագործվող «ծանր հիվանդություն» հասկացությունը ունի ոչ միայն բժշկական, այլ նաև իրավական նշանակություն, քանի որ անձի հիվանդությունը կարող է բժշկական տեսանկյունից համարվել ծանր, սակայն չխոչընդոտել նրա՝ վարույթն իրականացնող մարմնին ներկայանալը: Այլ կերպ՝ հիվանդության «ծանրությունը» չի կարող դառնալ հիմնական չափանիշը նշված հիմքով գործով վարույթը կասեցնելու համար:

---

[1] Տե՛ս ***Королев М. В.*** Приостановление предварительного следствия в связи с психическим или иным тяжким заболеванием обвиняемого: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2000. С. 14.

[2] Տե՛ս ***Клюкова М. Е.*** Приостановление дела в советском уголовном процессе: Автореф. дис. ... канд. юрид. наук. Казань, 1990. С. 16 - 17.

[3] Տե՛ս ***Быков В. М., Ломовский В. Д.*** Приостановление производства по уголовному делу. Юридическая литература. М., 1978, С. 16.

[4] Տե՛ս ***Репкин Л.М.*** Приостановление предварительного следствия: учебное пособие. – Волгоград, 1971.

Ամեն դեպքում ծանր հիվանդությունը կարող է գործով վարույթի կասեցման հիմք հանդիսանալ, եթե այն խոչընդոտում է մեղադրյալի ներկայանալուն նախաքննական մարմնին կամ դատարան, ինչպես նաև հնարավորություն չի տալիս նրան իրացնելու գործով վարույթի ընթացքում իր դատավարական լիազորությունները:

Թերևս նշված կանոնից բացառություն կարող է լինել միայն այն դեպքը, երբ անձի մոտ ախտորոշվել է այնպիսի վարակիչ հիվանդություն, որը թեև մեղադրյալին չի զրկում վարույթն իրականացնող մարմնին ներկայանալուն, սակայն կարող է վտանգել շրջապատողների կյանքն ու առողջությունը:

Քննարկվող հիմքի առնչությամբ մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում չկա նաև այն հարցում, թե ինչպիսի դատավարական փաստաթղթով պետք է հաստատվի մեղադրյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունը:

Այսպես, Մ. Ռեպկինը գտնում է, որ եթե հիվանդության փաստը ակնհայտ է, և դրա ծանրության աստիճանը կարող է հաստատել բուժող բժիշկը, բավական է միայն նրա տեղեկանքը: Այն դեպքում, երբ բժիշկը անձամբ ի վիճակի չէ որոշելու հիվանդության բնույթը, նոր միայն անհրաժեշտ է նշանակել դատաբժշկական փորձաքննություն[1]:

Ա.Մ. Պոպովի կարծիքով՝ մեղադրյալի (կասկածյալի) հոգեկան հիվանդության փաստը կարող է հաստատվել միայն դատահոգեբուժական փորձաքննության «ամբուլատոր կամ ստացիոնար» եզրակացության միջոցով, իսկ այլ հիվանդությունները՝ բժշկական հանձնաժողովի կամ վիճահարույց դեպքերում՝ փորձաքննության եզրակացության միջոցով[2]:

Ս.Ս. Չերնովան արդարացիորեն գտնում է, որ մեղադրյալի ծանր հիվանդությունը կարող է հաստատվել միայն դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններով, քանի որ եզրակացությունն ունի էական առավելություններ, հատկապես՝

ա) փորձաքննության եզրակացությունը քրեական գործով հանդիսանում է ապացույց,

բ) փորձագետը նախազգուշացվում է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին,

գ) դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ՝ պատկերացում կազմելու, թե երբ կառողջանա մեղադրյալը՝ նկատի ունենալով, որ վերջինս բժշկության բնագավառում ունի հատուկ գիտելիքներ,

դ) մեղադրյալի՝ քննչական գործողություններին մասնակցելու անհնարինությունը կարող է հաստատվել միայն դատաբժշկական փորձաքննության եզրակացության միջոցով, քանի որ այդ հարցի որոշումը մտնում է փորձագետի իրավասությունների մեջ[3]:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ մեղադրյալի ծանր հիվանդու-

---

[1] Տե՛ս ***Репкин Л.М.*** Приостановление предварительного следствия: учебное пособие. – Волгоград, 1971. С. 51.

[2] Տե՛ս ***Попов А. М.*** Проблемы совершенствования оснований и условий приостановления предварительного следствия: дис. ... канд. юрид. наук. Саратов, 2004. С. 138.,

[3] Տե՛ս ***Чернова С. С.*** Проблемы принятия следователем решения о приостановлении производства по уголовному делу на основании заболевания подозреваемого или обвиняемого// Вестник Уралского юридического института МВД России, № 3, 2016, С. 64.

թյան հիմքով քրեական գործով վարույթը կարող է կասեցվել, եթե՝

ա) հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունը ժամանակավոր է,

բ) որպես կանոն խոչընդոտում է մեղադրյալի մասնակցությունը քրեական գործով վարույթին,

գ) հիվանդության փաստը հաստատված է համապատասխան բնագավառի փորձաքննության եզրակացությամբ:

Այսպիսով, ամփոփելով նշված հիմքի վերաբերյալ առկա մոտեցումները, կարծում ենք, որ այն փոփոխության կարիք ունի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում պետք է ներկայացվի հետևյալ խմբագրությամբ. «***Մեղադրյալը ժամանակավոր հոգեկան կամ այլ ծանր հիվանդ է, ինչը հնարավորություն չի տալիս նրան մասնակցելու գործով վարույթին, եթե այդ փաստը հաստատված է համապատասխան փորձաքննության եզրակացությամբ***»:

ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված գործով վարույթի կասեցման մյուս հիմքը ***մեղադրյալի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելն է, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնար է:*** Գործնականում հաճախ մեղադրյալի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելու հիմքը նույնացվում է նրա քննությունից թաքնվելու հետ: Այստեղ կարևոր է ընդգծել, որ նշված դեպքում մեղադրյալի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելը չպետք է հանդիսանա քննությունից թաքնվելու հետևանք, հակառակ դեպքում գործով վարույթը պետք է կասեցվի մեկ այլ՝ քննությունից մեղադրյալի թաքնվելու հիմքով:

Այսպիսով, մեղադրյալի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելու հիմքով քրեական գործով վարույթը կասեցնելու համար միաժամանակ պարտադիր կարգով պետք է առկա լինեն հետևյալ պայմանները.

ա) մեղադրյալը պետք է գտնվի ՀՀ սահմաններից դուրս, ընդ որում՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելը չպետք է քննությունից խուսափելու նպատակ հետապնդի,

բ) առանց մեղադրյալի մասնակցության հետագա քրեական վարույթը պետք է անհնար լինի:

Քրեական գործով վարույթի կասեցման հինգերորդ հիմքը ***անհաղթահարելի ուժի առկայությունն է, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին (ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ)***: Գործով վարույթի կասեցման այս հիմքը նորույթ է գործող օրենսդրության մեջ, թեպետ տեսական գրականության մեջ ավելի վաղ է առաջարկվել այն ամրագրել կասեցման հիմքերի շարքում: Այսպես, Վ. Դացենկոն դեռևս 1983 թվականին առաջարկում էր ընդլայնել կասեցման հիմքերը՝ դրանց շարքում նախատեսելով բնության տարերային երևույթների (գետերի վարարում, երկրաշարժ և այլն) առկայությունը[1]:

Նախատեսելով անհաղթահարելի ուժի հետևանքով գործով վարույթի կասեցման հնարավորություն՝ օրենսդիրը չի սահմանում, թե ինչ պետք է հասկանալ անհաղթահարելի ուժ ասելով: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածում այն բնորոշվում է որպես բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակ, արտակարգ կամ ռազմական դրություն, որոնք խոչընդոտում են քրեական գործով հետագա վարույթին:

---

[1] Տե՛ս ***Даценко В.*** Регламентация приостановления по делы //Социалицтическое законность, М., 1983, № 11, С. 49.

«Անհաղթահարելի ուժ» հասկացության քրեադատավարական էությունը գործող օրենսդրության մեջ բացահայտված չլինելը գործնականում հանգեցնում է այն բանին, որ բոլոր այն դեպքերում, երբ ստեղծված իրավիճակը չի ներառվում կասեցման մյուս հիմքերի մեջ, մեկնաբանվում է որպես անհաղթահարելի ուժ, և գործով վարույթը կասեցվում է հենց այդ հիմքով: Օրինակ, հաճախ գործնականում փորձաքննության եզրակացությունները նախաքննության ժամկետում ստացված չլինելը գնահատվում է որպես անհաղթահարելի ուժ, և գործով վարույթը կասեցվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով: Կարծում ենք, որ ներկայացված պրակտիկան ընդունելի չէ, քանի որ նույն տրամաբանությամբ գործով կարևոր նշանակություն ունեցող վկային չհայտնաբերելը, տուժողի ծանր հիվանդությունը ևս կարող են գնահատվել որպես անհաղթահարելի ուժ: Այսինքն՝ ստացվում է գործով վարույթի հետագա ընթացքը խոչընդոտող ցանկացած հանգամանք, եթե դա նախատեսված չէ ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասում, կարող է գտահատվել որպես անհաղթահարելի ուժ:

Հետևաբար, խնդրի օրենսդրական կարգավորումը արդիական է և հրատապ: Այս առումով որպես ուղենիշ կարող է ծառայել Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը:

Քրեադատավարական օրենքով սահմանված գործով վարույթի կասեցման վերջին հիմքը *կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի առերևույթ ՀՀ Սահմանադրությանը հակասելն է, որի սահմանադրականության հարցը որոշելու համար դատարանն իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը և դիմելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան (ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 2-րդ մաս)*: Այս դեպքում դատավարական գործողության ընդմիջումը օրենսդիրը կապում է այլ իրավաբանական փաստի, այն է՝ կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի առանձին դրույթների սահմանադրականությունը որոշելու հետ: Քրեական դատավարությունում ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը իրավաբանական փաստ է, որն ուղղված է կանխելու հակասահմանադրական նորմերի կիրառումը քրեական գործով վարույթի ընթացքում: Կիրառելով սահմանադրական օրենք՝ դատարանը դրանով ապահովում է նաև դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Այսպիսով, ամփոփելով կասեցման հիմքերին առնչվող տեսական և գործնական հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է հիմնավորված կերպով հետևություն կատարել, որ ներկայացված առաջարկությունները միտված են վերացնելու գործնականում տեղ գտած այն խնդիրները, որոնք առաջանում են քրեադատավարական օրենքով սահմանված այս կամ այն հիմքով գործով վարույթը կասեցնելիս: Միաժամանակ, կասեցման առանձին հիմքերի վերաբերյալ ներկայացված վերլուծությունները հնարավորություն կտան իրավակիրառողներին, որ դրանք գործնականում կիրառվեն օրենքի տառին և ոգուն խիստ համապատասխան:

ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕУЛИРОВАНИЯ ОСНОВАНИЙ ПРИОСТАНОВЛЕНИЯ ПРОИЗВОДСТВА ПО ДЕЛУ В УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ РА

Арсен Мартиросян
Заместитель начальника управления по надзору за законностью дознания и предварительного следствия Генеральной прокуратуры РА, к.ю.н., доцент

Статья посвящена проблемам правового регулирования оснований приостановления производства по уголовному делу. В настоящей статье автор анализирует основания приостановления производства по делу в соответствии с нормами УПК РА и представляет ряд предложений по их реформированию, направленных на решение ряда практических вопросов, возникающих при применении того или иного основания приостановления производства по делу. Кроме того, автором представляется ряд проблем, возникающих на практике при применении отдельных оснований приостановления производства по делу, в связи с чем предлагаются конкретные предложения, направленные на применение этих основания в соответствии с буквой и духом закона.

THE PROBLEMS OF REGULATION OF THE GROUNDS FOR SUSPENSION OF CRIMINAL PROCEEDINGS IN THE CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Arsen Martirosyan
Deputy Head of the department of Supervision over Legality of Inquest and Preliminary Investigation of the RA General Prosecutor's office, Candidate of Law, Docent

The article is devoted to the legal problems of regulating the grounds for suspension of criminal proceedings. In this article, the authors presents the grounds for suspension of criminal proceedings and gives some offers, intended to reform several problems we deal with when suspense the criminal procedure. Besides, in the article the author shows some practical problems on the grounds we deal with when suspense the criminal procedure and gives concrete offers directed to solve them according to the letter and soul of law.

Բանալի բառեր – *քրեական գործով վարույթի կասեցում, կասեցման հիմքեր, քննությունից թաքնվել, մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառով պարզված չլինել, ծանր հիվանդություն, քրեական հետապնդման անձեռնմխելիություն, անհաղթահարելի ուժ*
Ключевые слова: *приостановление производства по уголовному делу, основания приостановления, уклонение от расследования, неустановление местонахождения обвиняемого по иным причинам, тяжелая болезнь, иммунитет от уголовного преследованияб непреодолимая сила*
Key words: *suspension of criminal proceedings, grounds for suspension, escaping of an accused, unknown whereabouts of an accused because of other reasons, severe illness, immune from criminal prosecution, insurmountable circumstances [force majeure]*